

ՄՇԱԿ

Հարեան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրագրադարացի գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թին

ՀՐԵՏԵՐԵԿՎՈՒՄ Է ԼՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներէ հե-
տեալ օրերէն:

Իրագրի դիմող և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵԳԻՐՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԻՐԵԿՏԵՆ մէջ:

ԼՄԵՆԶԻՆ ՀՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեալ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция „Мшак“.

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները.— Ներքին ա-
ռուծիչ և նախագահ Ախալցխայից: Նամակ Երևանից,
Նամակ Գերբեշեղից: Նամակ Սարկիսիւնից: Նա-
մակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լու-
րեր.— Սրտաքին առաւելիչ: Ֆրանսիայ,
Անգլիա: Նամակ Պարսկաստանից: Նամակ Պարս-
կաստանից.— Խառն լուրեր: — Զայտարարու-
թիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԷ- ՆԵՐ

Այս յօդուածով մենք կամենում
ենք սկսել «Մշակի» մէջ «Բա-
ղաքական մտածողները» վերնա-
գրով յօդուածների մի շարք, որոնց
ժամանակ առ ժամանակ առաջ-
նորդող յօդուածի տեղ կը տպենք:

Մենք այդ յօդուածների մէջ
հաղորդելով ընթերցողին մի որ և
է քաղաքական նորութիւն, կամ
վերջնելով այս ու այն քաղաքա-
կան կամ հասարակական երևոյթ,
կաշխատենք նրանց վրա մի թե-
թեւ ընտրական հայեացք գցել:

Լմողը Լեւոպայի համար այժմ
մի տեսակ հանելուկ է Գերմա-
նիայի սարսափելի զենուորիկը:
Ինչ նպաստակով է զենուորիկում
Գերմանիան.— յայտնի չէ... Ո՛ւմ
դէմ պէտք է ուղղել նա իր հետե-
ւեալ արշաւանքը, նոյնպէս յայտնի
չէ: Միայն մի բան յայտնի է որ
այդպիսով այդ երկիրը, խաղաղ
ժամանակ պահելով մի ահագին
զօրք, սպառում է իր ներքին ար-
դիւնաբերական ոյժերը և աւելի

ու աւելի տրտունջ է յարուցա-
նում արդիւնաբերող, աշխատող
դասակարգի մէջ: Ընցաւ այն
ժամանակը երբ աշխատող դասա-
կարգը անգիտակցական կերպով
ստրկացած էր ազնւապետական
դասակարգի ձեռքով, անցաւ այն
ժամանակը, երբ այդ դասակարգը
անբան կենդանի էր հարստահա-
րող, շահասէր դասակարգի ձեռ-
քում: Մեր ժամանակներում դը-
ժուար է նոյնպէս յափշտակել
աշխատող դասակարգը ունայն
փառքի խոստումներով:

Երեւելի գերմանական զօրապետ
Մօլտկէի նորերումն ասած խօս-
քերը, թէ խաղաղութիւնը և ազ-
գերի զենաթափ լինելը թէև ցան-
կալի է, բայց մենք մեր դարում
ազգերի այդ ցանկալի դրութիւնը
չենք տեսնի, թէ զենաւորվելու
դէմ առաջն առնելու անգոր են
մինչև անգամ ազգերի պետերը,
թագաւորները և կայսրները և
թէ այդ բաղդաւոր դրութիւնը
այն ժամանակ կիրաւորվի, երբ
ազգերը այն գիտակցութեանը կը
հասնեն, որ պատերազմը ազգային
դժբաղդութիւն է.— Մօլտկէի այդ
խօսքերը խիստ բնազատութեան
արժանի են:

Երեւելի զօրապետը կարծում է
որ ոչնչացնել պատերազմը կարող
է միմիայն ազգերի կրօնական
և բարոյական զարգացումը...
Այդ շատ կարելի է որ մա-
քուր քրիստոնէական զգացմունքը

ժամանակով կը ոչնչացնի պատե-
րազմները, բայց մինչև այժմ,
մարդկութեան ամբողջ պատմու-
թիւնից երևում է որ կրօնա-
կան զգացմունքը, ինչպէս մինչև
այժմ ըմբռնում էր նրան մարդ-
կութիւնը, բիւ չարաւ պատե-
րազմների յայտնվելուն նպաստե-
լու համար:

Կարելի է միթէ մոռանալ որ
այն ազգը, որ ամենից շատ կրօ-
նական էր, հրէաները, միշտ ամե-
նաարինահեղ պատերազմներ էր
վարում: Միթէ խաչակրաց պա-
տերազմ դրդողը կրօնական զգաց-
մունք չէր, երեսուն տարվայ ա-
րինահեղ պատերազմը միթէ՞ կը-
րօնական զգացմունքի ծնունդ
չէր...:

Վերջապէս յայտնի է որ կրօ-
նական զգացմունքից դրդված պա-
տերազմները միշտ ամենասարսա-
փելի, ամենաանխնայ, ամենաա-
րինահեղ էին:

Ընդհակառակն, յայտնի է որ
ամեն անգամ և ամեն ժամանակ-
ներում, երբ տէրութիւնները կա-
մենում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է
կրօնական պատճառ: Այդպէս ա-
նում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է

կրօնական պատճառ: Այդպէս ա-
նում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է

կրօնական պատճառ: Այդպէս ա-
նում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է

կրօնական պատճառ: Այդպէս ա-
նում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է

կրօնական պատճառ: Այդպէս ա-
նում էին որ ազգերը աւելի յօ-
ժարութեամբ գնային պատերազ-
մի դաշտը, միշտ յարուցանում
էին ժողովրդի մէջ մի որ և է

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱՅԻՍԻՍՏ

Յունվարի 28-ին

«Մշակի» առաջնորդող յօդուածը զԳԼԳ ենք դի-
մում վերնագրով շատ ազդու տպաւորութիւն
գործեց այստեղի հասարակութեան վրա: Առանց
դասակարգի խտրութեան Ախալցխայի հայ հասա-
րակութիւնը ոգևորված է ամենաշնորհ զգացմունք-
ներով ազգային գործը պաշտպանելու համար, և
անս օրինակը. երէկ մի հարստեանց տոնի ժամա-
նակ ծիսակատար քահանայ, գերապատիւ հայր
Գարեգին Ղազարեանը ներկայացնելով բազմաթիւ
սակ հանդիսականների առաջ հայ պարբերական
մամուլի աննախանձելի նիւթական դրութիւնը,
այնպիսի համակրութեան ցոյցեր արտայայտել
տուաւ, որ բնաւ չէր կարելի սպասել մի քանի
հասարակ դասակարգի մարդիկների կողմից: Բոլորը
գոչում էին անուշիկ աղաղակներով. «օգնէ՛ք, օգ-
նէ՛ք» և խոյն պոչում էին լուսման սեղանի վրա:
Ներկայ գտնված զարգացած երիտասարդութիւնը
խիստ յուզված էր այս սրտաշարժ տեսարանից և
նա խոյն օրոշեց հինգից Ախալցխայում մի հաս-
տատ գրականական ֆօնդ, որով կարելի լինի իւ-
րաքանչիւր տարի գոնէ 40 հատ «Մշակ» և «Մե-
ղու Հայաստանի» բերել տալ ձրիաբար բաժանե-
լու ամենահարկաւոր տեղեր:

Նշանաւոր է որ այս հանդիպման լուսաւորչադա-
ւան հայ քահանայի դէմ յանդիման նստած էր
կաթօթիկ հայ քահանայ, որը պաշտպանում էր իր
պաշտօնակցին ամենաշնորհ խօսքերով: Երկու երի-
տասարդ քահանաների սերտ միութիւնը ազգային
գործի մէջ արտաբայովում էր զօրեղ տպաւորու-
թեամբ...

Եթե եկեղեցապատկան գիւղեր, որ Ախալցխայի
հասարակութեան է պատկանում տուել է Ե-
միածինը կապալա Տէր-Խորէն քահանային:
Երբորդ անգամ արդէն ընդհանուր խորհուրդի
ժողովելով եկեղեցու սրահում, քաղաքի բոլոր հայ
հասարակութիւնը որոշեց անմիջապէս ուղարկել
Եմիածին, չորս պատգամաւոր ամենանշանաւոր
անձինքներից Նորին Օծութեան խնդրելու համար,
որ խնայ հայ ժողովուրդը և փոխ այն կարգա-
դրութիւնը: Պատգամաւորները այսօր մնաց բա-
րեաւ ասացին ժողովրդին, ամենով իրանց հետ
հազար մաղթանք գործի յաջողութեան համար:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

24 յունվարի

Խմբագրութեանը յանձնարարութիւնը մեծ սի-
րով ընդունեցի և կաշխատեմ, որպէս կը զօրէ
կարողութիւնս լինել հետեւող խղճի աւելի, քան
թէ երկրիս սովորութեանը: Սկսեմ ուրեմն.— Հայր
պապականութիւնը օրեցօր զգալի է դառնում մեզ
համար: Քաղաքային իրաւասուններից ոմանց խն-
դրքի համաձայն, ամսոյս 21-ին վարչութիւնը արտա-
կարգ ժողով կազմեց հետեւեալ խնդիրների համար.
1) Խմանալու համար թէ սորանից երկու ամիս ա-
ռաջ կազմված յանձնաժողովը, որին տրուած էր
10,000 րուբլի ալիւր գնելու համար, ինչ է արել.
2) Թէ ինչ միջոցով պէտք է հարկաւոր եղած հա-
ցը ձարել:— Առաջին խնդրի բնութիւնից երևեալ,
որ յանձնաժողովը յանձնել է 10,000 րուբլին իր
անդամներից մէկին, որ Օրդեսոյից կամ Թիֆլիսից
ալիւր բերել տայ, բայց այդ պարունք բերել է

առելի մի 1200 բուրգով ալիւր, մնացած գումարը պահել է իր մօտ անգործադրելի, կամ ինչպէս ասում է էլին՝ իր համար պոլիմարիալ է բերել տուել՝ օգուտ քաղելու։ Թէ այդ բերել տուած 90 մեշով ալիւրը և թէ արքունի ամբարից արուած (կարծեմ) 400 մեշով ալիւրը՝ նոյն յանձնաժողովի հսկողութեան տակ բաժանվել է հացթուխներին և Կոնստանտնուպոլիսի քաղաքի համար հաց թխան և լիտր 60 կոպէկով վաճառել, բայց չհասնողը հացթուխները ծախել են բարձր գներով գիւղացուց վրա թէ թխած հացը և թէ ալիւրը։ Փաղաքացիները ասածից երևեցաւ որ այդ պայմանադրութեան համար ինքը դիմել է նահանգական վարչութեան և ոստիկանութեան ու խնդրեալ որ դրանց կողմից զօրաւոր հսկողութիւն գործադրուի, որպէս զի գիւղացուց հաց չը տան հացթուխները, բայց պատշաճաւոր օգուտներն չէ ստացել նրանց կողմից։—Իրաւաստներին արդարապէս մեղադրված յանձնաժողովի անդամ Հալիլ-Միրզայ-Հիւսէյնը, ըստ առաջարկութեան իրաւաստը Վասիլ Նիդազարեանցի յանձնառու եղաւ իր մօտ մեղացած փողով բերել տալ ալիւր այն գնով, ինչ գնով որ 90 մեշով գնել է սորանից երկու ամիս առաջ և սորանով արդարացաւ...

Գալով երկրորդ խնդրին՝ երեք զխաւոր առաջարկութիւն եղաւ։ 1) իրաւաստը Վասիլ Նիդազարեանցը առաջարկեց, որ ստորագրութեամբ ժողոված փողով գնված ալիւրը գործադրվի միմիայն քաղաքի արդարաւորներին համար. առաջ՝ ցուցակագրել իր օգ աղբատների անունը, տալ իւրաքանչիւր ընտանիքին հարկաւոր եղած հացի համար ամսական տոմսակ, որով իրաւունք ունենայ ստանալ իր համար որոշված քանակութեամբ թխած հաց՝ այն հացթուխներից՝ որոնց կը տրուի վարչութիւնից ալիւր այդ նպատակին համար, իսկ նոցա (հարկատուները) որոնց չի տրուի տոմսակ, գնեն իրանց համար հաց փողը ինչ աւելի գնով այն հացթուխներից, որը չեն ստանում ալիւր քաղաքից։ Այս տոմսակների միջոցով կարելի էր իմանալ նախ թէ օրական ինչքան ալիւր պէտք է տրուի քաղաքային վարչութիւնից, երկրորդ՝ տոմսակ ունեցողը կարող էր ապահով ստանալ իր բաժինը միայն, երրորդ՝ քաղաքի պարտքը կրելով չափ կը լինէր. չորրորդ՝ հարկատուներն էլ աղբատի բաժին մասնակից չէին լինի և հինգերորդ՝ որ և է հսկողութեան հարկաւորութիւն չէր լինի։ Բայց այս առաջարկութիւնը չընդունվեց, որովհետեւ 1) վարչութեան անդամ պ. Բաբաջանեանցն անհարկին համարեց կարճ միջոցում աղբատների անունան ցուցակագրելը, ասելով որ՝ դորա համար հարկաւոր է առնուազն ամիս ու կէս ժամանակ մոռանալով որ ամենամեծ քաղաքներն անգամ մի օրվայ մէջ կարողանում են ցուցակագրել։ 2) այդ առաջարկութիւնը չը հասկացան իրաւաստներից խիստ շատերը, որովհետեւ սովոր չեն պատշաճաւոր ունենալով։ 3) Առաջարկութիւնն արաւ պ. քաղաքագործը՝ հիմնվելով ձայնաւորներից ունեցած առաջարկութիւնների վրա և այսպէս ձեռնարկեց. տալը հացթուխի տալ օրական 60 լիտր ալիւր, որից կը գոյանայ 90 լիտր թխած հաց. դորա կէսը պարտաւոր են հացթուխները պատրաստելու մինչև առաւօտեան ժամի 7-ը, միւս կէսն էլ՝ մինչև ժամի 2-ը, զինի ճաշուն. նշանակել իրաւաստներից օրական հերթապահներ, որոց պարտաւորութիւնը լինի գնալ նշանակած ժամերին հացթուխներին խանութը, ստանալ թխած հացը կըսով և գնել դուրսը ծախելու համար։ Առաջարկութիւնն ընդունվեց, իբր հնչող իրաւորները, որի հնչողութեան և ճիշդ կատարվելու մասին, առնուազն, տարակուսելի է։

4) Պէտք է ասել որ այդ երկրորդ առաջարկութիւնն ընդունվելուց յետոյ՝ իրաւաստներից սէկը, այն է վարչական Նիդազարեանցը, առաջարկեց խորհրդին, այսպէս. որովհետեւ անկարելի է ճիշդ հսկողութիւն անել հացթուխների վրա, որ քաղաքի բնակիչների համար պատուիրած հացից չը գողանան և թխել գնով չը ծախեն կողմնակի մարդկանց վրա և որովհետեւ անկարելի է արգելել, որ գիւղացուց հաց չը գնեն քաղաքից՝ ուստի հարկաւոր է քաղաքային վարչութեանն ունենալ իր սեփական հացարանը, 5—6 հատ, սորանով միջոցով միւս հացթուխների գէժ, վասն զի միակ մրցութիւնն է, որ կարող է նոցա սանձահարել։ Խորհուրդը չընդունեց առաջ այս առաջարկութիւնը, բայց երբ պ. Վ. Նիդազարեանցը հարցրուց թէ արդեօք, եթէ հացթուխները չընդունեն քաղաքային խորհրդի վճիռը և վաղը կամ միւս օրը փակեն իրանց հացարանները, այն ժամանակ ինչ պէտք է անել։ Խորհուրդն ինկատի առնելով այս հարցը՝ վճեց. այդ գէպըմը քանի 5—6 հացարաններ ունենալ խանութ քաղաքի հաշուով և սորա իրաւորներու համար ընտրեց 5 անդամից բաղկացած մի յանձնաժողով, որը (չը գիտեմ ինչ մտքով)

առաջին յանձնաժողովի հսկողութեան ներքոյ պէտք է գործէ։—Թէ ինչ հետեանք պիտի ունենան այս վճիռները, ոչինչ չեմ կարող ասել առ այժմ. բայց կը ցանկալի որ այսպիսի ստիպողական հանգամանքներում ք. վարչութիւնը կրկնապատկէր իր գործունէութեան եռանդը և աղքատ դասակարգի անախաճնեկի վիճակին մարդասիրաբար կարկեցէր։—Մի երկու խօսք ևս խմբածին վարչութեան դէմ խօսողներին։ Քաղաքի պտղաւորութեան յաջողեցան 100 խալվար ցորեն գնել խմբածին, խալվարը 80 բուրգով։ Չը գիտեմ ուրիշների կարծիքը այդ վաճառքի մասին ինչ կը լինի, բայց ես կասեմ որ՝ ինչ որ ընծայ կամ ողորմութիւն է, պէտք է իր ընթացիկ գնով վաճառվի. այդ կէտից նայած, պէտք է շատ չնորհակալ լինել խմբածին ժողովունից, որ բարեհաճեց այդքանը գնել վաճառելու աղբունով. Հաստատ աղբուրից գիտեմ որ խմբածին կերակրում է, բայց իր միտքանունից՝ օրական 200 հոգի եւս, որոց մեծ մասը թիւրքալից գաղթածներն են կազմում։ Այս 200 հոգին, վաճիքի միաբանների հետ՝ կազմում են մօտ 300 հոգի, որոց հաշիւ բաւ լինի օրական մօտ մի խալվար ցորեն, այն ինչ վաճիքի ամբարում 600—650 խալվար է մնում միայն, որից խմբածին պէս վաճիքը պէտք է գնել մի տարվայ պաշար պահել և մնացածովն էլ իր չընթաց և սեպակաւն գիւղերին օգնէ։

Սկիզբ

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԻՑ

18 յունվարի

Այս տարի կովկասի ամեն կողմերից հազար ու մի տխուր լուրեր են հասնում հացի թանկութեան պատճառաւ, ամեն տեղ ժողովուրդը վերջոված լարված վիճակի մէջ է, ամենքի խօսակցութեան առարկան հացի թանկութիւնն է. հազարաւոր բուրգներ ժխտում են սովի առաջն առնելու, բայց դարձեալ բաւական չէ, դեռ ձմեռը և դարունը շատ փոքր պիտի կուլ տան և ձմռան ինչպէս կանցիլ ամառը։

Մենք հայերս միշտ գործիւն ենք այն ժամանակ, երբ վտանգը պոկէն հասնում է և դանակը ոսկորին դէմ ընկնում, իսկ նրանից առաջ մեզ համար ամեն մի գործիւնը ջլատող երևոյթ է, ամեն մի սպառնացող վտանգ նշանակութիւն չունի. մենք չենք հեռանալու թէ ինչ կը լինի այս կամ այն վտանգի հետեանքը և ամենին չենք աշխատում իր ժամանակին նրա առաջը գալիս և և սկսում է իր աղբեղութիւնը բանցնել, ասա այն ժամանակ միայն դարձնում ենք և հանդէս դուրս գալով՝ ձայն տալիս, թէ ժողովուրդի այս ինչ պէտքը պիտի հաղթվի, դարման տանվի։ Մինչև մեր ժողովներ կազմելը, փող հաւաքելը, պաշար բերել տալը ունենոր սնանկանում է, անանկը աղքատանում, իսկ աղքատը օրը աւելի սեւանում և դառնում։ Քաղաքացին գոնէ կարող է մի կերպով իր գլուխը պահել, բայց գիւղացին ինչ պէտք է անէ իր անախաճնեկի դրութեան մէջ, չէ որ նա աւանայ իր ունեցած չունեցածը հացի պիտի տայ սովից չը մոռնելու, միանգամայն յայտը Աստուծու վրա դնելով, բայց թէ ինչ խեղճութիւններ են պատահում, այդ ինքն ըստ ինքեան յայտնի է։

Ո՞վ պէտք է հոգայ գիւղացու վիճակի բարելաւմանը, գիւղացին. նա սղէմ է, նա անկարող է դեռնալ։ Քաղաքացին որ այնչափ շահվում է նրանից, որ այնքան սերտ կապ ունի նրա հետ, չը պէտք էր սառն ու անտարբեր մնար դէպի նրա թշուառ վիճակը, նրա կեղծութիւնը. չէ որ նրա շահերը իր իսկական շահերն են։ Եթէ քաղաքացին ուղղում է իր անձի չափը, անպատճառ պիտի բարւոյն գիւղացու դրութիւնը։ Գլխաղաքաւոր մինչև այսօր հայ գիւղացու և հայ քաղաքացու մէջ մի անանցանելի անդունդ կայ։ Քաղաքացին չը նայելով որ ամեն օր գիւղացու տաժանակիր աշխատութեան արդիւնքն է վայելում, դարձեալ հեռու է պահում իրեն և մի տեսակ արհամարհանքով նրա վրա նայում. նա կարծում է թէ գիւղացին մի տեսակ արարած է, որ բնութիւնից սահմանվել է միայն իրեն ստիպաբար ծառայելու, իր պէտքերը լցնելու, այդ իսկ պատճառաւ էլ չէ թափանցում նրա ներքին վիճակին, չէ աշխատում նրա նիւթական ապահովութեան և բարոյական զարգացման համար. քաղաքացին բոլորովին հեռու է այդպիսի գաղափարներից։

Մշակը որ համարներում անաղաք կրկնում է գիւղացու ապահովութեան համար, քանի քանի միջոցներ է առաջարկում, բայց ո՞ր, մեր հայերը այնքան փափուկ սիրտ չունեն ճշմարտութիւնը ընդունելու, նրանք մի քանի տարի շարունակ

փորձութեան պիտի մատնվին, որ ապա թէ ըսկան մի բան անել։ Փառք Աստուծու, մի երկու տարի է որ փորձութեան համը առնում ենք, այսուհետեւ գոնէ աշխատենք ապագայի փորձանքներից ազատվելու, այսուհետեւ գոնէ խելամոռնը, որ մինչև մեր մէջ ընկերութիւններ չը կազմվեն, գիւղացու կեանքը ապահովացնելու, գիւղատնտեսութիւնը ծաղկեցնելու, նրան նահապետական դրութիւնից հանելու, մենք միշտ պիտի վնասվենք և տաժանալաւորի տուժենք։

Դերբենդը, ինչպէս երևում է, ամբողջ կովկասում ամենաներշնչիկ դրութեան մէջ է գտնվում հացի կողմանէ։ Ալիւրի պուրը չընթաց քաղաքներում հասել է մինչև 2 բուրգ 50 կոպ., մինչև դեռ այստեղ 1 բուրգ 50 կոպէկով կարելի է լաւ ալիւր գնել. թէ քաղաքը և թէ մասնաւոր անձինք ժամանակին եթէ ոչ առատ, գոնէ մինչև ամառնաւորը բաւականացնող ցորեն են գնել և այժմ ալիւր չիմելով վերալիւնալ գնով ծախում։ Միւսը թանկ է, Ֆուսուր 10—12 կոպ. ոչխարին, իսկ տաւարին 8 կոպէկ, բայց բնութիւնը այդ կողմից էլ օգնել է մեզ, վայրենի բաղերը խմբելով լիքն են թէ ծովը և թէ դաշտերը, այնպէս որ հատը 10—12 կոպէկով ամեն օր ման են ածում։ Այժմ 15-ին ուսանելը մի ներկայացում տուին յօգուտ տեղական քաղաք մուսուլմանների համար. բարձրատնային մարդկանց կանայք թէ հայերից և թէ ուսանելից կառավարչի պաշտօն էին կատարում բուֆետում, որի եկամուտը յատկացրած էր նոյնպէս մուսուլմաններին. ներկայացումը բաւականին յաջող անցաւ և մեծ տպաւորութիւն գործեց։ Թող օրինակ առնեն մեր հայերը ուսուցիչ այս մարդասէր վարմունքից։

Դերբենդի

ՆԱՄԱԿ ՍԱՐԻՎԱՄԻՇԻՑ

22 յունվարի

Սարիվամիշ գիւղը գտնվում է Վարսի նահանգում։ Բնութիւնը բնական պատերազմից առաջ այս հայաբնակ գիւղը բաւական բազմամարդ էր։ Բնակիչները պարագլուխ էին երկրագործութեամբ. գլխաւորապէս և վաճառականութեամբ ժամանաւորապէս Բայց խեղճ և անդորր, առանց ուրիշների մազաչափ վնաս հասցնելու, ընթանում էին իրանց ընտրած խաղաղ և բնական շաղկով։ Այն ինչ, երբ պատերազմն սկսվեցաւ՝ կորաւ, բռնաբարվեցաւ. նոցա խաղաղ կենեքը, նոցա կենեքին տպաւորեցաւ անապահովութիւն, մահ, նեղութիւն, տանջանք... և շատերը ստիպվ իրանց բոլոր ունեցած կարողութիւնը—ունեցած չունեցած հարստութիւնը, իրանց կենսական անհրաժեշտ միջոցներն աշխրբին, որոնք մարդկային պատկերով ու հանդերձով յայտնվել էին և այս կողմերից մեծ քանակութեամբ գոնի էին տաժանում, այլ և տուժեցան իրանց կենեքով։

Պատերազմի վերջնական փոքր ինչ առաջ, այս խեղճ արարածները, չը կարողանալով տանել ամենայն տեսակ տմարդի կամայականութիւն, ցրվեցան այլ և այլ տեղեր, որոնց մնացորդները այժմ այստեղ կազմում են մի քանի հայ ընտանիք, որոնք պարագլուխ են երկրագործութեամբ և մանրավաճառութեամբ (զօրքի վրա)։

Պատերազմը վերջնական ցետոյ պատեղ մշտական զօրք ուղարկվեցաւ։ Այս ծննդեան տօնին ուսանելը մեծ պատրաստութիւն էին սեւանում այդ մեծ տօնը կատարելու։ Այն ինչ մենք, հայերս, ոչ եկեղեցի ունէինք և ոչ էլ քահանայ, ուստի մենք պէտք է զօրքի մնայինք դորանից, եթէ մայր Ղորիմազ Թովհանիսեանը չը հրաւիրէր մերձակայ հայաբնակ Բեաւաշին գիւղի Մեարիքը քահանայ Տէր-Թովհանիսեանցին և տօնակատարութեան համար իր տանը տեղ չը տար։

Այս առաջին ազգասիրական գործը չէ, որ մ. Ղ. Թովհանիսեանը կատարում է, նա շատ անգամ է օգնել խեղճ և անձար հայերին։

Միւրիշ Տէր-Սիմէօնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Տանձուտ, 17 դեկտեմբերի

Ձեր լրագրի 1879 թվականի 200 համարում յայտնած էր մի քանի չուշեցնելի գնադար, որոնց օգնութեան են դիմել էի Վալադաւորի վէպը տարածելու համար։

Իմ պարտքն էր պ. պ. ստորագրողներին բաւականացնել, բայց ես ստորագրութեան թերթը և գումարը հեղինակին ուղարկելիս, յայտնել էի նո-

րան իմ հեռանալը Շուշուց, և խնդրել ուրիշ յանձնելու գրքերը բաժանելու գործը։

Յոյս ունեմ որ չուշեցի պ. պ. ստորագրողները կը դիմեն հեղինակին, նրան ուղղելով իրանց պահանջը։

Ա. Թոխմախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 յունվարի

Հաստատ աղբիւրներից տեղեկանալով վաւանտանելի սովի մասին, իսկոյն սկսեցինք նուիրութիւններ ժողովել զանազան դասակարգի մարդկանցից, որի գումարն եղաւ հարկւր քսան և երկու բուրգի ու թխուր և մէկ կոպէկ. ի միաժողով նուիրատուներին. խնդրում ենք ձեռնարկ, պ. խրաւորատուներին։

Թարութիւն Շահադիզեանց 5 բուրգ, Մ. Ռոստմանց 5 բ., Յ. Աղաբիրեանց 5 բ., Էդարաք Մնցակեանց 5 բ., Ի. Կոնստանտնեանց 5 բ., Յ. Սիմեանց 5 բ., Ալեքսան Դ. Միլիեանց հարու վաճառական 6 կոպ., Աւ. Խօջաբիրեանց 3 բ., Կարաբիրեանց 3 բ., Թարութիւն Գեորգեանց 3 բ., Ալեքսանդր Ալեքանց 3 բ., Տիգրան Մովսէսեան 3 բ., Կիլիկ Սարգսեան 2 բ., Արշ. Մովսէսեանց 2 բ., Նիկողոս Նիկողոսեանց 2 բ., Դանիելեանց 2 բ., Բ. Մովսէսեանց 2 կարապետ Ալեքեանց 2 բ., Սարգիս Գապրեանց 2 բ., Գապար Տէր-Սիմէօնեանց 2 բ., Հայրապետ Սուրբանեանց 2 բ., Այնայտ ոմն 2 բ., Գրիգորեանց 1 բ., Ա. Գուրաբիրեանց 1 բ., Յովհաննէս Չառնեանց (ուսանող) 1 բ., Սիմ. Պետրոսեանց 1 բ., Ալեքսանդր Սուրբանեանց 1 բ., Եագօր Մովսէսեանց 1 բ., ոմն 1 բ., Սիլբեակով (ուսանող) 1 բ., Միլիադ Ս. Տէր-Թովհանեանց 1 բ., Բարսեղ տ. Նիկողոսեանց 1 ժամագործ հայ 1 բ., ժամագործ հայ 1 բ., Սափհայ 1 բ., Համազասպ Սափհաբեանց 1 բ., Սիլբեակով 1 բ., Ստեփան Սուրբանեանց 1 բ., Յովհաննէս Բարսեղեանց 1 բ., Միլիադեանց 1 բ., Մարգար Տ. Օհանեանց 1 բ., Առաքել Սալուսեանց 1 բ., Գեորգ Տապապետ 1 բ., Մարտիրոս Շիգանեանց 1 բ., Սերգէյ Բաղդեանց 1 բ., Սիմեոն Բարսեղեանց 1 բ., Եպ. Կուրանեանց 1 բ., Ս. Գարաշով 1 բ., Յ. Թարութեանց 1 բ., Սիլբեակով 1 բ., Աւստեանց 1 բ., Արտէմ Սարսեանեանց 1 բ., Մամիկոնեանց 1 բ., Եագօր տէր Ստեփանեանց 1 բ., Ն. Կուրանեանց 1 բ., Չիլէր Սուրբակով 1 բ., Պ. Սարգիսեանց 1 բ., Ս. Գափիեանց 1 բ., Բոչնաբեանց 1 բ., Յ. Սաղաթեանց 1 բ., Վարդանեանց 1 բ., Ս. Վարդանեանց 1 բ., Շաբարով 1 բ., Կարապետ Սիմէօնեանց 1 բ., Գրիգոր Շահաբեանց 50 կ., Ա. շատրուանց 50 կ., Եագօր Միլիեանց 50 Յ. Միւրումեանց 50 կ., Գիւրգէ Էմիլով 50 Ք. Գարսեան 50 կ., Միլիադ Սաղաթեանց 50 կ., Ա. Վարդանով սափիւր 30 կ., Ն. Մարտիրոսեանց 25 կ., Կաստուով ուսանող 20 կ., Գրգորեանց 20 կ., Լուսէն Թովսեանց 20 Ալեքանիւր պարսիկ 10 կ., Գումարն է 122 81 կ.։

Ս. Գուրաբիրեանց և Ա. Խօջաբիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԱՍԱԼ-ԲԱԼԱԲԻՑ, որ ըրում պ. Մ. ի տան մէջ եղած հացկերթի մանակ մի քանի պարսիկներ յօգուտ քաղաքի քաղաքներ նուիրել են 54 բուրգ։

Վերջին օրերի ընթացքում ԹԻՖԼԻՍԻՍ Նախկին փողով։ Օրերը տաք և զարմանալիս են «ՊԱՐԱՅԵՆ» լրագիրը հաղորդում է, որ խմբագրութեան ինքնատուրով յօգուտ սովաների տուած ներկայացումից ընդհանուր եկամուտ է 1075 բ. 40 կ., թատրոնի վարձ տու պ. Պալմին 300 բ. ուրեմն մնացել է 775 բ.

Կ. Նուիրատուութիւններէ կայացել է 397 ր. 50 Կ., ուրիշն բոլոր ստացված գումար 1152 ր. 90 Կ. Պէտք է անել, որ պարտն Պալմ 300 րուր թատրոնի վարձ վերցնելով, բաւական թանգ է վերցրել, բայց այդ բանը նրան ներել է, որովհետեւ պ. Պալմը թատրոնը տաքացրել է, լուսաւորել է, երեկոյեան ծախսեր է արել և բացի այդ ինքն էլ իր գրպանից, (կամ նոյն 300 ր. թատրոնի վարձից) 50 րուր նուիրել է սովորականներն:

Մեզ հաղորդում են ԱՅԱՆԱՐԱՆԻՑ, որ քաղաքացիք զիմէ են սրբազան Սաղիսեանին և խնդրել են պաշտօն անուանված հոգևոր տուրքի հացերը մի տարի ժամանակով իրանց փոխ տալ: Ասում են, որ հացերը արդէն ծախված են կղեր:

Յունվարի 31-ին պ. Սլավոնսկի մի կոնցերտ տուեց Արթուրու թատրոնում: Կոնցերտը կրկին շատ լաւ անցավ: Բացի մի քանի բաղկացողութիւններից բոլոր տեղերը թատրոնում բռնված էին: Թատրոնը լի էր զինաստրպէս զինւորներով: Սլավոնսկիի ստացած մի գեղեցիկ ընծայ քաղաքիս իւր էլ ընկերի զարոյցի երիտասարդ զինւորներէ, ինչպէս մի արծաթեայ ոսկեղօծ թաս էր և մի պսակ:

Մեզ հաղորդում են ԵՐԵՎԱՆԻՑ որ այդ քաղաքից դէպի Ագուլիս Սաղաթաղի գիւղի դաշտով անցնող ճանապարհի վրա ներքին-ազուրկի մի երիտասարդ և Գեաղ գիւղի երկու երիտասարդներ ցրտից սառել են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃԱՆԱՍՈՒՄ

Պատգամաւորների ժողովն ընդունեց օրէնքի այն ծրագիրը, որով ներքին նաւազնացութեան հարկերը փոփոխութեան են ենթարկուում:

Պատգամաւորների ժողովի նախագահը յայտնեց, որ մաքսային ցուցակի մասին վիճաբանութիւններ են սկսվել, և խնդրեց ժողովի անդամներին, որ մի այսպիսի նշանաւոր հարցի քննութեան ժամանակ, քաղաքական հարցեր չը խառնեն:

Մաքսային և այլ և այլ հարկերի ցուցակի վերաբերութեամբ, երկրագործութեան և առևտրական միջնորդ պ. Տիրար յայտնեց կառավարութեան կարծիքը:

Սէնատն ընդունեց միջնորդութեան առաջին յօդուածը, որը ձգտում է բարձրագոյն ուսումնական խորհրդարան կազմել:

Յունվարի 29-ին կայացած պատգամաւորների ժողովը մէջ, պ. Տիրար ապացուցեց, որ 1876-ից սկսած գաղթականութեան վաճառաշահութիւնը լաւացել է, այս պատճառով էլ պ. Տիրար կարծում է, որ բաժնակի հարկի վրա 24% աւելացնելը բաւական է: Իսկ ինչ կը վերաբերի մէտալական առարկաներին, միջնորդը խօսքերով, կառավարութիւնը համաձայն չէ դրա հարկը 40%-ից աւել բարձրացնել, չը նայելով, որ այդ մասին կազմված մասնաժողովը աւելի էր առաջարկում: Սրանից յետոյ պ. Տիրար ապացուցեց, որ երկրագործութիւնը 1860-ի վերանորոգութենից մեծ օգուտներ քաղեց: Միջնորդը կարծում է, որ հարկերի թեթեւացնելը ոչ թէ երկրագործութեանն օգուտ կը բերի, այլ նա շահաւէտ կը լինի միայն միջնորդներին, որոնք երկրորդ ձեռքից ծախելով, աւելի օգուտ կը ստանային. երկրագործութեանն օգնելու տոննաւազու միջոցն այն է, որ հէշոպցի դաշտերի ջրերը, տարածվի երկրագործական գիտութիւնը, և միջոց արդի գիւղատնտեսական ժողովներ անելու, որով այդ գործին վերաբերեալ դասազան մասնագէտներ միջոց կունենան միմեանցից օգուտ քաղելու, և միասին մի ընդհանուր գործ առաջ մղելու: Մենք մեր ստացածից երկու

անգամ աւելի մթերք ենք ուղարկում Անգլիա, աւելացրեց միջնորդը և պահանջեց, որ մաքսային ներկայ հարկերը ոչինչ փոփոխութեան չենթարկեն, որովհետեւ պ. միջնորդի կարծիքով, Ֆրանսիան ոյժ ունի մրցել օտար պետութիւնների արդիւնաբերութեան հետ, և մաքսային հարցը, որ ամեն երկրում ամենահակնադէմ հարց է, կարող է ապագայ վերանորոգութիւնների և օտար երկրների հետ անելու բանադնացութիւնների ժամանակ, հիմնվել մաքսային ներկայ սխտէմայի վրա:

ԱՆԳԼԻԱ

Արդէն մօտենում է պարլամենտի բացվելու ժամանակը. շուտով դանազան հարցեր ու վիճաբանութիւններ կհանեն. մի քանի հարցեր կը վճռեն, շատերն էլ նորից ծնունդ կառնեն. ժողովրդի ու լրագրութեան մէջ հաղաւորութեան բաներ են խօսում, մանաւանդ միջնորդութիւնը զբաղված է դանազան երազական երեւակայութիւններով: Ի հարկէ բազմութիւն են հարցերը, և պարլամենտը ահագին գործեր ու ահագին պատասխանատուութիւն ունի ժողովրդի առաջ: Այդ բազմութիւն հարցերից, որը ամենաշատ է ըզբաղեցնում հասարակական կարծիքը, դա հողային օրէնքի ծրագիրն է: Մեր ընթերցողներին պէտք է արդէն յայտնի լինի, թէ իր լանդական շարժումներն ինչ մեծ աղմուկ զրցելին բոլոր Բրիտանիայում. մի կողմից այդ շարժումները, միւս կողմից անգլիական երկրագործ դասակարգի թշուառ վիճակը և վերջապէս այդ ահագին աղմուկները զարթեցրին պարլամենտին իր լէտարգիայից, և ստիպեցին նրան վերջապէս հասկանալ, որ մօտեցել է ժամը, երբ այլ ևս անկարելի է արհամարհական կերպով վերաբերվել դէպի հողային հարցը:

Ասում են, որ պարլամենտի առաջին վիճաբանութեան առարկայ կը լինի այս հարցը, և ամենքը մի առանձին զարմանքով են լսում այն, որ իբր նոյն իսկ պահպանողական կուսակցութիւնն է ընդունել այս հարցը իր հովանաւորութեան ու պաշտպանութեան տակ: Հողային վերանորոգութիւններն իրանց հետ կը բերեն և մի ահագին կարգ ուրիշ անհրաժեշտ վերանորոգութիւններ, որոնցից ամենաառաջինը, կերէի կը լինի և անդրանիկ որդու արտօնութիւնների (մայօրատ) ոչնչացումը, որը վաղուց արդէն ծանրացել է ժողովրդի վիճակի վրա:

Ներկայումս աշխատական հարցն այլ ևս առաջնայ պէս չէ զբաղեցնում հասարակական ուշադրութիւնը, և մի քանի լրագրիներ ասում են, որ կամ Անգլիան նոր գործեր պէտք է ուղարկէ այնտեղ, և կամ բոլորովին պէտք է ձեռք վերցնի Աշխատատեղում գրեթէ հազարաւոր ցեղեր են զինված, և եթէ զենեայի օրէրտսի ահարկու անունը չը լիւնէր այժմ, վաղուց արդէն կարելի էր անգլիացիներին հոսը այնտեղից:

Ասում են, որ աշխատական ցեղապետները աշխատում են 12,000 գործ հանել անգլիական բանակի դէմ, և միանգամից ջարդել նրանց:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սպումատ 2 յունվ.

Սպումատ գաւառի դուրսիցը այժմ ամենասարսափելի վիճակի մէջ է հացի թանկութեան պատճառով. երկու տարվայ միմեանց հակառակ եղանակները փնտցեցին ցանքերին. 57 թւի չարուհակ անձրեւները բոլորովին փտեցրին արդէն հասունացած հունձը իր տեղում, իսկ 58 թւում այնպիսի սաստիկ երաշտութիւն եղաւ, որ բոլոր ցանքերը չորացան: Տեղացիք Աստուծոյ բարկութեան են վերաբերում այս պատուհասը:

Յորենի մի բեռը (10 պուր) Սպումատում ան-

ցեալ տարներում ծախվում էր 10 կամ 12 դանով, իսկ այժմ ծախվում է 65 կամ 70 դանով, կը նշանակէ որ առաջվայ արժէքից վեց անգամ աւելի թանկացել է, որ միանգամայն աղքատ ժողովրդի կարողութիւնից դուրս լինելով գնելը, շատերը սոված են մնում: Երեւակացե՛ք, կան ընտանիքներ, որ տարեկան 100 կամ 150 դան (30—40 րուր) վատտակ ունեն, որը երկու բեռ ցորենի գին է, այլ ևս զրպէս կարող են մի ահագին ընտանիք կերակրել, որ մի ամսվայ մէջ երկու բեռ ցորեն կը սպառէ:

Յնիկ և տեղացի աղքատներին հնար կար մի կերպով կերակրել մինչև առաջիկայ տարվայ հունձը, որովհետև այստեղի ունեւորները բաւական խնամք ունեն չքաւորների վրա, Բայց հասարակութեան ցաւի վրա մի երկրորդ աւելի դժուարին ցաւ աւելացաւ: Սպումատին սահմանակից Տաճկաստանի Աղբակ կոչված գաւառից այժմ գաղթել են այստեղ աւելի քան 300 հայ ընտանիք: Այդ ողորմելիները ուսում-թիւրքական վերջին պատերազմի տարիներում անդադար հալածվելով և անդադար կողպակելով քրդերից, հանգստութիւն չունեցան ոչ վարելու և ոչ ցանելու համար. և ինչ էլ որ գնել էին, երաշտութիւնից չորացաւ: Այս պատճառով, վերջին չքաւորութեան հասած, և բոլորովին զրկվելով կերակրելու կամ ապրելու միջոցներից, նրանք թողնում են իրանց հայրենիքը և գաղթում են Սպումատ, մտածելով որ իրանց աղքատիկներին մօտ ապրելու հնար կը գտնեն:

Բացի միեւալ 300 ընտանիքը, Տաճկաստանի հայ գաղթականների թիւը Սպումատում օր ըստ օրէ աւելանում է: Նրանք ծարաւվել են բոլոր հայոց գիւղերում և մուրացկանութիւն են անում: Շատ անգամ մի մուրացկան 10—20 տուն է մտնում, հալւո իրան մի պատառ հաց են տալիս, որովհետև ամեն տեղ լուծ է մի և նոյն պատառաւանը, ձոր մէկիդ ամաղ, մենք էլ հաց չունենք ուտելու, մեր երեխաներն էլ քաղցած են...

Եթէ ձմեռ չը լինէր, այդ թշուառների ապրուստը աւելի դժուար կը լինէր: Այս տարվայ սարսափելի ձմեռը աւելի դժուարացրեց նրանց ապրելը, թիւսն պէտք է, հագուստ պէտք է, որ չունեն. քրդերը նրանց հագին մի կտոր չոր չեն թողել: Այժմ լցվել են հայ գիւղացիների գոմերում և 5—10 ընտանիք բնակվում են միասին անասունների հետ: Տեղային հայերը շատ են ցանկանում այդ ողորմելիների կեանքը պահպանելու, բայց անհնարին բան է մի այսպիսի ահագին բազմութիւն կերակրելը, երբ տեղացիները շատերը իրանք էլ հաց չունեն ուտելու:

Այս կողմերում Տաճկաստանից գաղթել են, բացի հայերից, և շատ ասորի ընտանիքներ, որոնք բողբոջական, կաթովի և նետտորական դաւանութիւններն են պատկանում: Բայց նրանց մասին հոգացողներ կան, նրանք եւրօպացի և ամերիկացի միսիօնարներ ունեն, որոնք ընկերութիւններ են կազմում, փող են հաւաքում և օգնում են իրանց սովեցանքին: Բայց հայերի համար ո՞վ է հոգ տանում: Աղբակայ գաղթականների հետ եկած, ս. Բարդուղիմէոս առաքելաւի վանքի վանահայր, և մի և նոյն ժամանակ Աղբակայ վիճակի յաջորդ Յովհաննէս վարդապետը դեռ անցեալ տարվայ նոյեմբերի 10-ին մի նամակ գրեց Թաւրիզ Պարոյկաստանի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսին, խնդրելով, որ նորին սրբազնութիւնը օգնութեան ձեռք հասցնէ գաղթականներին և նրանց կեանքը մահից ազատելու համար կարգադրութիւններ անէ, —բայց նամակը մինչև այսօր մնացել է առանց պատասխանի...

Այժմ մեր միակ յոյսը մնացել է մեր հեռաւոր և մերձաւոր աղգայիներին վրա, որ հոգ տանեն Աղբակայ գաղթականների մասին, գտնէ նրանք կարողանան այս ձմեռը անցկացնել, եթէ ոչ, այդ 300 ընտանիքից մինչև գալու հունձը ժամանակը գուցէ կէսն էլ չի մնայ, եթէ այսպէս կը շարունակվի նրանց կեանքը: Յոյս ունենք, որ մեր օտարերկրայ հայերը, մասնաւոր Ռուսաստանի հայերը, այնքան կարեկցութիւն կը դնեն դէպի իրանց թշուառ եղբայրակիցները, որ չեն թողնի նրանք սոված մահ լինելու:

Մարտիրոս Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Դարե՛ք, 21 յունվարի

Երկար միջոց լինելով Դավրիժում, թող ներուրին մի քանի խօսք իմ այդ երկարամնայ կեցութեանն ունեցած Թաւրիզիցներէն աւելու ընթերցողին: Այս միջոցներում Դավրիժի հայերի այն ձգտումը դէպի ուսումն, և այն միաբանու-

թեամբ գործելը թէ արական և թէ իգական սեռի մէջ կրթութիւն տարածելու համար, (ինչպէս արդէն յայտնի է բաւական թղթակցութիւններից) կարելի է առաջին բայը համարել, որ Դավրիժի հայ հասարակութիւնը վերջապէս արթնանալով իր անտարբերութիւնից, մի կողմ թողնելով իր անմիաբանութիւնները, աշխատում է կրթել իր դասակներին, մինչդեռ նա առաջ ասում էր զէհ, վարդապետ կամ տէրտէր հօ չեն դառնալու: Կամ թէ ճաղջկանը ինչ հարկաւոր է կարգաւոր—հէնց այս սառն խօսքերն էին հասարակութեան կողմից, որ յետագէտ թողնելով Արամեան զպրոցը, իգական զպրոցի բացմանը զիւաւոր արգելաւիճէն էին:

Իգական զպրոցի անհրաժեշտութիւնը մի երեք տարի առաջ թէ ուսուցչական և թէ այլ ժողովներում բացատրեց նոյն տարվայ հայ լեզուի ուսուցիչ Յակոբ Միլքը Յաղորդանքը, սակայն չը նայելով նաև սրբազան Անդրեաս առաջնորդի ցանկութեան այդ մասին, թէ տեղացոյց անհամաձայնութիւնը, և թէ մի քանի անձանց գործած խորամանկութիւնները թող չը տուին զպրոցի հիմնվելուն: Բայց այժմ ի սրտէ ուրախ եմք, որ ոչ միայն մեր Դավրիժի եղբայրները ունեն իգական սեռի զպրոց, այլ և թատրոնական մի խումբ:

Թէ Արամեան, և թէ լիւրժայ թաղի ուսումնարանները, լինելով հիմնված եկեղեցու բակում, կից են նաև հասարակաց գերեզմանատանը: Ուրիշ քաղաքներում գերեզմանատաները գտնվում են հեռու փոքր ինչ քաղաքից, իսկ Դավրիժի այդ գերեզմանատանը լինելով առաջ քան ուսումնարանների հաստատվելը, քաղաքին մօտ մինչև այսօր էլ չը նայելով, որ հայերը ունեն առանձին քիչ հեռու քաղաքի միջին մասից մի մեծ հանգստարան, սակայն մեծ մասամբ տեղացիք իրենց ննջեցեալները թաղում են այդ գերեզմանատաներում, վախելով պարսից գործած բարբարոսութիւններից: Աներկբայ եմք որ այժմեան նոյն տեղի վիճակաւոր առաջնորդ Գ. Մուշեղեանցը կը կարգադրէ այդ բանը:

Արեւ Դ. Ապրեսեանց

ԽԱՌՆԼՈՒՐԵՐ

Փարիզից հեռագրում են, յունվարի 30-ից, որ Դէբեզ վարդապետը, որը սկսել էր ճանապարհորդել Աֆրիկայի միջով արեւելքից դէպի արեւմուտն ալիք, մուտա Ուլիջիում, Տանգանյիկա լճի ափին:

Աղբակայ գաղթական սարսափելի թանգութիւն, սով և մահ է տիրում մանաւանդ փախստականների մէջ: Նրանցից մէկ օրում սովից մեռան 65 մարդիկ: Դիակներն բերանում փայտի կտորներ գըտան, որոնցով թշուառները կամենում էին լազեցնել իրանց քաղցը: Սովը տարածվում է վանում և բայաղէթում: Ֆիլիպպոպոլում ապրում են 7000 փախստականներ. հիւպատոսները կարող են միայն նրանց երրորդ մասին հաղու օգնութիւն հասցնել:

Ասիական լրագրիները ներկայումս խօսում են չինաց բողոքիւնանի ֆինանսական դժուարութիւնների մասին: Այս թեգաւորը դեռ ևս պակսվելու համար իսկապէս շատ երիտասարդ է. բայց նրա պալատներում մինչև 70 կանայք են ապրում, որոնք մանաւանդ աչքի են ընկնում իրանց չորերի շքեղութեամբ: Միտաքս, թաւիլ և այլ նիւթեր, նոյնպէս մարդաբաններ, որ կրում էին անցեալ տարի իրանց վրա վերոյիշեալ իշխանութիւնը արեւելիկ լուսնի երեքօրը նստեցան 250,000 տանկեր, այսինքն հողային հարկի գումարը կէսից աւելի նստեցան, (տաւել հաւասար է 2 ր. 50 Կ.): Մի քանի ամիս առաջ, կանանցից մէկին թագաւորը ընծայեց մէկ վերաբերու զարդարված ամանաթանկապին և ամենահազուադէպ մարդաբաններից: Յաւն այն է, որ սա արդէն միջահասակ կին է և այս պատճառով, եթէ վերաբերու նրա մօտ կը լինի նրա մահվան օրը, այն ժամանակ, որպէս սովորութիւն է, պէտք է չորերը արեն: Այդպիսի պատահարից վախենալով բողոքիւնան մի քանի անգամ փորձ փորձեց վերադարձնել այդ շքեղ վերաբերու, բայց իզուր, որովհետև պատառ իշխանութիւն ձեռքից չէ թողնում:

Խմբագիր—Գրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Իրավաձառանցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կազմած	—	ր.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Թաւանդ մեղու պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր-	—	»	40	կ.
Մարկոսեանի կարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, թարգ. օր Ն. Տէր-	—	»	50	կ.
Մարկոսեանի — նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	—	»	60	կ.
Մօրես կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառն-թարգմ. Գաղիկերէնից.	1	»	—	կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն Զ. թարգ. Գաղիկերէնից	4	»	—	կ.
Դիւանակ բլուր, հեղ. Էօփէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիկերէնից	2	»	75	կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Ասատուրի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Ասատուր	—	»	35	կ.
Մի կաթիլ արտուր, զոր կը հեղու. Սիսակ հայ միւլիւրի վրայ	—	»	35	կ.
Խօսք զհայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզակցի	—	»	70	կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձտեանց	1	»	25	կ.
Մանանայ նոր հեղինակի	1	»	75	կ.
Միքայէ և Մամուլէ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանդոթ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'արսէ Խրի-	—	»	—	կ.
մեան հայրիկ	—	»	20	կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Ս. Ձերազի	—	»	40	կ.
Հայաստան և Խալիպայ նոյն հեղ.	—	»	60	կ.
Մամուլէ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-	—	»	—	կ.
ժրուհու.	—	»	50	կ.
Հրատարակութիւն Ջարմայր Մսերեանի	—	»	—	կ.
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս.	1	»	—	կ.
Նղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	30	կ.
Արքայադուտար Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	35	կ.
Հակայական ձեռքեր Անգղիական վէպ. պատկերազարդ	—	»	10	կ.
Իշխան Բէհրուժեանի հրատարակութիւններ	—	»	—	կ.
Վոյքի իմ վեճեր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բերքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Աշխատանք երեկոյ զինգում, վոդվիլ մէկ արարուածով	—	»	25	կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանտ և Ժանէտ, օպերա-վոդվիլ, մէկ գործողութեամբ	—	»	40	կ.
Պառանքներ իրատ. վոդվիլ մէկ արարվածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.
Տիկինը նրան սպասում է, կ'առաջարկէ իր զուգընթացին	—	»	30	կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով	—	»	40	կ.
Փախուած դրան մօտ. պատկերամանսխոսութիւն	—	»	30	կ.
Պէտք. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	—	»	30	կ.
Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասադրեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներով, դասական պիտոյքներ ուսումնարաններին և աշակերտներին համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիկերէն վրայաանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և զիտու-թեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրներ կատարվում են ամենայն արա-դութեամբ: Օտարաբաղադրելի իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով ВЪ Тифлисѣ. ВЪ Центральную книжную торговлю	—	»	—	կ.

10—1



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գոռնիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալազանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երբեք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ԵՐՈՊԵՅԻ ԵՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐԻ ԱՄԱՆԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԵՐԼԻԿՆԵՐ ՄԵՐԿԻՑ ՀԵՆՐԻԽ ՎՈԼԳԻԷ և ՄԵՐԿԻՑՈՒՆԻ ԼՈՒԻՑԷ ՏԵՂԵՐԻ գնեցի՝ առաջին տեղեր 50 կօպէկ, երկրորդ 0 կօպէկ: Երեւանները կէսն են վճարում:

1—5

Իժիշկ Բ. Նաւասարդեանի «Դիֆտերիա» կամ «փողացաւ» գրքոյը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, Կենդրոնական գրալաճառանոցում և Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրալաճառանոցում: Գինն է 25 կօպէկ—բարեգործական նպատակով:

Թիֆլիսի ԱՐՀԵՍՏԱՌԻՐՆԵՐԻ ԿԼՈՒԲԻ զխաւոր անդամների խորհուրդը ի նկատի ունենով յունվարի 26-ին նշանակված առաջին ընդհանուր ժողովին ՁԸ ԿԱՅԱՆԱԼԸ, ԿԼՈՒԲԻ կանոնադրութեան 12 յօդուածի համեմատ հրաւիրում է կուբի անդամներին ՀԱՒԱՐՎԵԼ փետրվարի 2-ին, երեկոցեան ժամի 7-ին:

2—2

Մի օրինոր ՎԱՐԺՈՒՆԻ, որ ուսուցչուհու ՎԱՅՏԱԿԱՆ ունի, ՆՈՐ է եկել ՓԱՐԻՋԻՑ և հիմնաւորապէս իմանում է ՌՈՒՍԵՐԷՆ, ՖԵՐԱՆՍԻԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ԻՏԱԼԵՐԷՆ լեզուները, նոյնպէս երկաթճոճութիւն և երկաթճոճութիւն. փնտռու է ԳԱՍԵՐ կամ վարժուհու ՊԵՏՏՈՆ: Հասցէն. Ատամանսկայա փողոց, ՁՈՒԲԱԼՈՎԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Անմիւրաբիայի հանդէպ, Բրոքսկու բնակարանում:

2—6

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ «ԿԱՅԾԵՐ»

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ Հեղինակութիւն ՐԵՖԻԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներէ ց իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Եւ մեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳԵՐՄԱՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ թիֆլիսում պէտք է դիմել «ՄԵՐԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔԻ-ՅԵԼԿՈՒՆԵՆԻՆ:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԻ, որ աւարտել է իւր ուսումն Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱՆՈՒՄԻ մինի մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրումէ ուղարկել հետևեալ հասցէին. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Іоану.

1—5

ՄՈԶԴՈՒԹԻ

Օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՆԻ շահաւոր պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «ՄԵՐԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔԻ-ՅԵԼԿՈՒՆԵՆԻՆ պայմանների մասին խօսելու համար:

ԱՐԴԵՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ 1880 Փոքրագիր ՕՐԱՅՈՑՈՑ Ն. Թ. Ք. Սկզբում գեղաքանդակ պատկերը՝ Պատրիարքին Հայոց Կ. Պօլոյ Տ. ՆԵՐՍԷՍԻ Եւ Քարտուղարին պատգամ. Հայոց Ի Բերլին՝ ՄԻՆԱՍՏ ՉԵՐԱՉ Վերջում սպիտակ երեսը յիշատակարանի համար: Գինն է առանձին տեղ 15 կօպ. Բ. Մեծագիր

ՕՐԱՅՈՑՈՑ 1880 Ն. Թ. Ք. Սկզբում գեղաքանդակ պատկեր՝ ՍՐԱՌՈՆ ՏՐԱՍՏԱՅ Բոլոր ՕՐՀ՝ Հրց.՝ մկ. և Հմբ. գրուած են կարգաւ և ՄԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՅ Եւ Տ. յաւելուածով Սկզբում գեղեցիկ պատկեր՝ ԴԻՏԱԿԱՆՈՐ ՁԿԱՆ

Գինն է մինչև 600 լ. . . 30 կ. Իսկ նորանից բարձր. . . 35 կ. Դուռնարով գնողաց գիծում կը լինի Ա. Դուռնարներնց ՅԵՐԵՒԱՆ

Թիֆլիսի ԳԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին պատրաստել սօճու և կաշու տախտակներ և թէյիաներ, քարեր. Մցլէթի, Սլէթի և Սօլալի բարածուխի ձիւթ և աւազ:

Պատրաստելու պայմանների նոյնպէս պահանջված առարկաների քանակութեան և չափի մասին կարելի է տեղեկանալ վարչաւթեան մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2 ամենայն օր: Թէ զրաւոր և թէ բերանացի առաջարկութիւնները ընդունվում են վարչութեան մէջ մինչև փետրվարի 7-ը:

1—3

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 1. Երգչի կէտն ցըս հանայ—Մանկական երգարան, երգեր և պարերը ընդունված է ներսիսեան և Գայանեան դպրոցներում: Գինն է . . . — ր. 20 կ. 2. Մեծատունեան ցըս—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց 1 ր. — կ. 3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիֆտերիա բողազացաւ . . . — ր. 25 կ. 4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վարկի հիւանդութիւններ. (Մաղիկ, կարմուխ, սկարլաթին, բժաւոր տիֆ, անդադարած տենդ, դիֆտերիա, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ) Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտանողական միջոցներ:

Վաճառվում են Չ. Գրիգորեանցի Կովկասեան գրալաճառանոցում:

2—5

2. Գրիգորեանցի «Կովկասեան գրալաճառանոցում» ծախվում են՝ 1. Գալիցիայի ան. Ա—բառգիրք Հայ-գաղղիարէն: Dictionnaire Armenien Francais. Գինն է 6 ր. 2. Գալիցիայի ան. Ա—Հայկական գեղապատկերներ, Գինն է 1 ր. 3. Մեծատունեան ցըս (Երկրէ վարժապետ) —Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց: Հատ. ա. Գինն է 1 ր. 2—3

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ Վերնագրով վեցամեայ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ Հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպագրուեցաւ և այս օրերումն կուղարկուի պատուէրի բաժանորդաց: Այս տետրին մէջ տըպուած կան 36 ՊԱՏԿԵՐ, յորոց 12-ն ԱԶԳԱՅԻՆ ԵՆ: ԲԱՄԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ 1880 ամի երկու տետրակց Գինն է 2 ուրբի. իսկ առանձին առանձին գնողների համար՝ իւրաքանչիւր տետրի Գինն է 1 ր. 50 կ. հանդերձ առաքմամբ:

Հրատարակիչ Ջարմայր Մսերեանց:

1—4

Թիֆլիսի ԳԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՅ ԲԱԶԱՐԻ և ՀԱՂԱԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարժով տալու համար. ուսաց բաղարի վրա 18 համարներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երկուսեան վարձի ՊԱՏԿԱՆԵՐԸ կը յայտնվեն:

1—3